ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, 1731, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, Էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am

թիվ 234-16
06 հուլիսի, 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Ի լրումն Օձուն համայնքի ղեկավարի 06.06.2016 թվականի թիվ 220-16 գրության, հայտնում ենք, որ Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 29-ի N 24-ից N 26 որոշումներում թույլ են տրվել տեխնիկական բնույթի սխալներ:

Կից ներկայացնում ենք համայնքի ավագանու որոշումների ուղղված տարբերակները:

Առդիր՝ 5 (հինգ) թերթ:

Հարգանքով
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Վ. Ձավարյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2016 թվական, N 24-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ՅՈԹԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի վեցերորդ պարբերության, 12-րդ, 12[1] և 14-րդ հոդվածների՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 29-ի յոթերորդ հերթական նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԼԻԶԱ ՊՈՂՈՍՈՎԱՅԻ, ՌԻՄԻԿ ՁԱՎԱՐՅԱՆԻ, ԼԵՎՈՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ, ՅՈՒԼԱԿ ՀԱԽԻՆՅԱՆԻ, ԳԱՐԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԵՎ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ S0250229 ՀՎՀՀ-ՈՎ ՀԱՐԿԱՏՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., հունիսի 29
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2016 թվական, N 25-Ն

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ կետի, 54-րդ հոդվածի, ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10-ի ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ,, N 47-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., հունիսի 29
Գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2016 թվականի հունիսի 29-ի N 25-Ն որոշման

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10-ի «ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի մասին» N 47-ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 01.1.1. գործառնական դասակարգման նախահաշվի 5122 հոդվածի գումարը պակասեցնել 3000, 0 հազար ՀՀ դրամով.
2. 04.5.1. գործառնական դասակարգման նախահաշվի 5113 հոդվածով նախատեսել 3000, 0 հազար ՀՀ դրամ.

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2016 թվական, N 26-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԼԻԶԱ ՊՈՂՈՍՈՎԱՅԻ, ՌԻՄԻԿ ՁԱՎԱՐՅԱՆԻ, ԼԵՎՈՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ, ՑՈԼԱԿ ՀԱԽԻՆՅԱՆԻ, ԳԱՐԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԵՎ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ S0250229 ՀՎՀՀ-ՈՎ ՀԱՐԿԱՏՈՒՄ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հիմք ընդունելով Օձուն համայնքի բնակիչներ Լ. Պողոսովայի, Ռ. Ձավարյանի, Լ. Կոստանդյանի, Ց. Հախինյանի, Գ. Ստեփանյանի, Ս. Ղարիբյանի դիմումները և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը՝ Օձուն համայնքի բնակիչներ Լիզա Պողոսովայի, Ռիմիկ Ձավարյանի, Լևոն Կոստանդյանի, Ցոլակ Հախինյանի, Գարիկ Ստեփանյանի և Օձուն համայնքի հողի հարկ և գույքահարկ վճարողների հաշվառման և հողի հարկի և գույքահարկի հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգի S0250229 ՀՎՀՀ-ով հարկատուի նկատմամբ սահմանել գույքահարկի գծով արտոնություններ հետևյալ չափերով.

1) Լիզա Արսենովնա Պողոսովային (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 12, տուն 19, ՀՎՀՀ 13615906) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենայի 2008-2014 թվականների գույքահարկի ապառքներից՝ 53 900 (հիսուներեք հազար ինն հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և 2008-2015 թվականների գույքահարկի տույժերից՝ 29 512 (քսանինն հազար հինգ հարյուր տասներկու) ՀՀ դրամ գումարի չափով.

2) Ռիմիկ Նիկալի Ձավարյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 5, տուն 56, ՀՎՀՀ 13618707) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենայի 2012-2016 թվականների գույքահարկի ապառքներից՝ 37 409 (երեսունյոթ հազար չորս հարյուր ինն) ՀՀ դրամ գումարի չափով և 2012-2015 թվականների գույքահարկի տույժերից՝ 14 253 (տասնչորս հազար երկու հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով.

3) Լևոն Սամսոնի Կոստանդյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 23, տուն 4, ՀՎՀՀ 13837861) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենայի 2015 թվականի գույքահարկի ապառքից՝ 22 500 (քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և 2015 թվականի գույքահարկի տույժից՝ 7121 (յոթ հազար մեկ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ գումարի չափով.

4) Ցոլակ Սեյրանի Հախինյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 13, փակուղի 2, տուն 4, ՀՎՀՀ S0250261) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենայի 2015-2016 թվականների գույքահարկի ապառքներից՝ 16 000 (տասնվեց հազար) ՀՀ դրամ գումարի չափով և 2015 թվականի գույքահարկի տույժից՝ 2532 (երկու հազար հինգ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ գումարի չափով.

5) Գարիկ Գագիկի Ստեփանյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, Ամոջ փողոց 2, տուն 24, ՀՎՀՀ S0250343) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենայի 2015 թվականի գույքահարկի ապառքից և 2016 թվականի գույքահարկի ապառքի մի մասից՝ 4 000 (չորս հազար) ՀՀ դրամ գումարի չափով և 2015 թվականի գույքահարկի տույժից՝ 506 (հինգ հարյուր վեց) ՀՀ դրամ գումարի չափով.

6) Օձուն համայնքի հողի հարկ և գույքահարկ վճարողների հաշվառման և հողի հարկի և գույքահարկի հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգի S0250229 ՀՎՀՀ-ով հարկատուին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 2, տուն 25, ՀՎՀՀ S0250229) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենայի 2015 թվականի գույքահարկի ապառքից՝ 6 400 (վեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և 2015 թվականի գույքահարկի տույժից՝ 2025 (երկու հազար քսան հինգ) ՀՀ դրամ գումարի չափով.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵՅԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., հունիսի 29
Գ. Օձուն